

զգիւնս գրքիս. զոր Տէր Աստուած ընդ միոյն հարիւրապատիկ եւ հազարապատիկ հատուցէ փոխարէնն աստ եւ ի հանդերձեալն արժանի արասցէ զնոսա եւ զիւրեանց ննջեցեալսն խաչին լուսոյն, երանական ձայնին, անթառամ պսակին, անվախճան ուրախութեան, ի դասն աջակողմեան եւ ի բարբառն որ ասէ. Եկայք աւրհնեալք հօր: Բայց գրեցաւ սա ի թուին Հայոց ՌԿԳ ամի եւ ի ամսեանն Յունիսի, ի կայսերանիստ մեծահամբաւ քաղաքն Կոստանդնուպոլիս, որ այժմ կոչի Ստամպոլ, ի դուռն Սրբոյն Նիկողայոսի սքանչելազործ հայրապետին, ի թաղն Վլանկու. ձեռամբ ապիկար եւ անարհեստ գրչիս Սիմէոնի, զոր տկար եւ փանաքի մտօք... մոլոր եւ ցրիւ եւ անարժան մատամբ նօտրեցի: Մոխրամած գիւմօք երես անկեալ աղաչեմ զհանդիպողսդ այսմ տատիս, սղալանացն ներել եւ զպակասն ընուլ, վասն պանդխտութեան եւ զարիպութեան զմիտս ցնորեալ էր եւ զիսելս մերժեալ. ըստ այնմ թէ լաւ է...»:

Թորգոմ արքեպ. Գուչակեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վանուց Սեբաստիոյ, Թ. 123 (Շարակնոց), էջ 77 = Հանդ. Ա. մ. ս. 1927, էջ 47:

#### 4. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ (1618)

Փառք... Արդ ես տկարս (յ)արհեստ գրչութեան եւ յետնեալս յամենայնի հիւանդ գորով... սկսայ... եւ յանդ ելեալ կատարեցի ի վայելումն... բարեմիտ, հեղահոգի,